ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<26>> <<մայիս >> 2014 թ N 45
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԲԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով, և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մայիսի 21-ի N50 որոշումը, Բաբիկ Մարգարյանի հետ կնքած 2014 թվականի փետրվարի 3-ի N254 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի մայիսի 26-ից Բաբիկ Մարգարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Շատինի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 / հինգ/ տարի ժամկետով:
2. 2014 թվականի մայիսի 26-ից լուծել Բաբիկ Մարգարյանի հետ կնքած 2014 թվականի փետրվարի 3-ին N254 աշխատանքային պայմանագիրը:

Է.ՂԱՋԱՐՅԱՆ